



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՔՐԵՏԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ ԲԱՐՈՉԻ ԸՆԹԱՑՔԻՆ

ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՎ ՆՈՐՈԳՈՒԱԾ ՄԵՐ ԾԱՌԱՅԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ԿԵԱՆԿԸ ՀԱՄԱՏՔՈՎ ԱՌԱՋՆՈՐԴԵՆՔ

Պատգամեց Առաջնորդ Սրբազան Հայրը

Կիրակի, 15 Ապրիլ 2007. Կրկնագատիկ, Նոր Կիրակի:

Յիսուսի հրաշափառ յարութեան յոյսը նորոգած է ամբողջ տիեզերքը: Հինը ալ անցեր է եւ ամէն ինչ նոր է: Նոր է կեանքը, նոր են յոյսերը, նոր ու նորոգուած է մարդը՝ ինք, Յիսուս Զրիստոսով: Թեմիս կեանքն ալ օրէ օր, կեանքին թաւալող ժամանակին հակառակ՝ նորանոր համայնքներով կը ծաղկի ու կը բարգաւաճի: Փիւնիկի պէս յառնող մեր ժողովուրդը, տարբեր շրջաններու մէջ նորէն կը կազմակերպուի, նորէն կ'ուճանայ:

Այդ նորոգեալ շրջաններէն մէկն է Քրեւենթա Հովիտի Հայ համայնքը, որ այսօր յատկապէս կը յիշատակէ Կրկնագատիկը: Շարականագիր Ս. Ներսէս Լամբրոնացիին բառերը կարծեք այսօր Քրեւենթա հայ համայնքին կը պատշաճին, հրաւիրելով բոլորին՝ ուրախութեամբ տօնելու Զրիստոսի փառաւոր յարութիւնը, որպէսզի վաղը միասնաբար կանգնեն «լոյսի սուրբ խորան»։ «Երկնաւոր Փեսային հարսնացած Աստուծոյ եկեղեցի, ներքնապէս զարդարուէ՛ ոսկեհիւս հանդերձներով պճնուած, որովհետեւ ահա քեզի՛ կու գայ Զրիստոս փառքի Թագաւորը: Զրիստոս Թագաւորով ուրախացած Սիոնի որդիներ, ցնծութեամբ տօնեցէք հնութենէ նորոգուած մեր հոգիներու նաւակատիքը եւ հրեշտակներուն հետ օրհնեցէք Զրիստոս փառքի Թագաւորը»:

Կիրակի կեսօրին, Քրեւենթա Հովիտի Հայց. Առաքելական Ս. եկեղեցւոյ նորընտիր հոգաբարձուները եւ երեսփոխանները խմբուած էին եկեղեցւոյ մուտքին, դիմաւորելու համար Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանը: Արեւը անգամ մը եւս քաղցրութեամբ կը ժպտեր այդ օր բոլորին, եւ տարեց ու երիտասարդ, պատանի ու մանուկ ուրախութեամբ կը դիմաւորէին իրենց առաջնորդը:

«Հրաշափառ»ով թափօրը մուտք գործեց եկեղեցի, ուր հաւատացեալներու խիտ բազմութիւն մը ներկայ էր: Օրուան պատարագիչն էր Առաջնորդ Սրբազան Հայրը: Խորանին կը սպասարկէին Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան եւ շրջանի հոգեւոր մատակարար՝ Արժ. Տ. Արտակ Բինյ. Տեմիրճեան: Ս. Պատարագի երգեցողութիւնը կը կատարէին եկեղեցւոյ երգչախումբը, ինչպէս նաեւ ներկայ հաւատացեալները:

Առաջնորդ Սրբազանը, իր քարոզի սկզբնաւորութեան, նախ փառք եւ գոհութիւն վերառաքեց Աստուծոյ, այս օրուան համար, ապա բարձր գնահատեց Քրեւենթա Յովիտի ծխական համայնքը, շնորհաւորեց եօթը հոգիներէ բաղկացած նորընտիր անդրանիկ հոգաբարձական կազմը եւ երեք նորընտրեալ երեսփոխանները, Տիկնանց Օժանդակ կազմը, դպիրներն ու երգչախումբի անդամները, բոլորին մաղթելով յարատեւ կորով եւ բարի ծառայութիւն, նաեւ յոյս յայտնելով՝ որ մօտիկ ապագային Քրեւենթայի համայնքն ալ ունենայ իր սեփական եկեղեցին:

Սրբազանը իր քարոզին բնաբան վերցուցած էր օրուան շարականի հետեւեալ հատուածը, որ կը խօսեր Թովմաս Առաքեալի թերահաւատութեան մասին. «Քու եկեղեցիիդ հիմքերուն յարութիւն առած երեւցար, որոնցմէ Թովմաս կը մերժէր հաւատալ քեզ տեսնողներուն. փափաքողին՝ քու մարմինիդ վերքերը ցոյց տուիր այսօր: Թովմաս սարսելով կը շօշափէր տեգին եւ գամերուն յառաջացուցած վերքերը, եւ գոչելով կը վերածայնէր, յարուցեալդ Տէր եւ Աստուած կը դաւանէր, որով «երանի» առինք մենք՝ որ չտեսած հաւատացինք քեզի»:

Յիսուսի յարութիւնը յաղթանակն է մահուան վրայ: Յիսուս իբրեւ անմահ Փեսայ՝ յարութիւն առաւ եւ ուրախացուց մեզ՝ իր հարսը՝ Եկեղեցին, եւ իր յարութեամբ նորոգեց մեզ ու լուսաւորեց մեր միտքերն ու սիրտերը, բոլոր հաւատացողներուն պարգեւելով առաւել կեանքը: Քրիստոսի յարութեան շունչով պէտք է նորոգուիլ, շարունակեց Սրբազանը, կարենալ փառաբանելու համար իր հրաշափառ յարութիւնը եւ մեր սրտերուն մէջ զգալու իր յարութեան ոյժը: Հակառակ որ առաքեալները Թովմասի պատմեցին Յիսուսի յարութեան մասին, սակայն ան ըսաւ, որ մինչեւ իր աչքով չտեսնէր ու ձեռքերով չշօշափէր Յարուցեալին վերքերը՝ պիտի չհաւատար: Եւ երբ Տէրը Թովմասի հանդիպեցաւ, ան զարհուրեցաւ, սարսեցաւ ու զՔրիստոս Տէր եւ Աստուած դաւանեցաւ: Այսօր մենք ալ կոչուած ենք Յիսուսի յարութեան խորհուրդը ապրելու մեր կեանքին մէջ, ծառայական ու գիտակցական կեանքով մեր անձերը նորոգելով, եւ հաւատքով գօտեպնդուելով: Պէտք է Քրիստոսի մեզի պարգեւած առաւել կեանքով մեր միտքն ու խորհուրդները փոխենք՝ որպէսզի իր տեսութեան արժանանանք, եզրակացուց Սրբազան Հայրը:

Ս. Պատարագի ակարտին կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, վասն յիշատակին Թեմիս Ազգ. Վարչութեանց, եկեղեցիներու Հոգաբարձութեանց, Տիկնանց օժանդակ մարմիններու, սարկաւազաց եւ դպրաց դասերու հին եւ նոր ննջեցեալներուն:

Ակարտին՝ ներկաները միաբերան երգեցին «Կիլիկիա» մաղթերգը, որմէ ետք «Ուրախ Լեր» շարականին երգեցողութեամբ՝ Սրբազանը առաջնորդուեցաւ եկեղեցիէն դուրս:

Եկեղեցւոյ Տիկնանց Օժանդակ Մարմինը պատշաճ հիւրասիրութիւն մը պատրաստած էր հաւատացեալներուն համար, որոնք հոգեպէս լիցքաւորուելէ ետք, նաեւ ֆիզիքապէս կշտացան ու իրենց տուները վերադարձան Քրիստոսի պարգեւած յարութեան նորոգեալ շունչով:

Պ.Ա.Կ.

DURING THE SERMON AT THE CRESCENTAL VALLEY CHURCH

**LET US BE GUIDED BY FAITH AND RENEWED BY
THE MESSAGE OF THE RESURRECTION**

DECLARED THE PRELATE

On Sunday, April 15, 2007, we celebrated New Sunday, a day that symbolizes the new life, hope, and renewal that is offered to us through the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ. It is a time of renewal also for the Western Prelacy which is flourishing with new parishes, among them the Armenian Apostolic Church of Crescenta Valley.

On Sunday afternoon, the newly elected Board of Trustees and delegates gathered at the church to welcome H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who conducted Mass and delivered the sermon. Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Ardag Demirjian assisted at the altar.

The Prelate commenced his sermon by giving thanks to God for His blessings, and then commended the Board, delegates, Ladies Association, acolytes, and choir members, wishing them all continued success in their service and expressing hope for the parish to have its own church in the near future.

The Prelate incorporated into his sermon the doubtfulness of the apostle Thomas. He spoke of the Resurrection of Christ as triumph over death. With His Resurrection Christ renewed us, enlightened our hearts and minds, and offered us eternal life. Though the apostles recounted the Resurrection of Christ to Thomas, he asserted that he would not believe it until he saw it with his own eyes and felt the wounds of Jesus. When the Lord did appear to Thomas, he was terrified and professes himself to Christ. The Prelate emphasized that today we are called to live our lives in accordance with the spirit of the Resurrection, to renew ourselves, and to be fortified by our faith. We must transform our minds and thoughts with the new life that Christ has granted us so that we may be worthy of Christ, concluded the Prelate.

Following Mass and requiem, parishioners enjoyed a reception prepared by the Ladies Association.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org. Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.